



ԿոՄիտաս

Մարգարիտ Բաբայանին 1906, 6 դեկտեմբերի, Փարիզ

Միրելի՛ օրիորդ Մարգարիտ,

Ձեր նամակն ինձ շատ մխիթարեց, բայց եւ այնպէս, մարդիկ հաւատում են ամէլի վատ լուրերին, քան լաւերին. եւ անուանարկուածը երկար շանք պէտք է գործ դնէ, որ կարողանայ անպիտանների միտքն էլ մաքրէ: Բայց կասէք, ի՞նչ փոյթ, թող չարն իր չարութեան մէջ խեղդուի: Իրաւ է, ես էլ եմ կրկնում ժողովրդի հետ այն վեհ միտքը, թէ՛ «գէշ մարդու օր արեւը սեւ հողի տակով արէք». միեւնոյն ժամանակ աջ ու ձախ եմ նայում, տեսնում, որ մարդիկ առաւել վատահոգի են քան բարեհոգի. չը կան, եթէ կան, չեն երեւում, այնպիսիները, որոնք չարերի վերայ արհամարհանք տաձեն, ընդհակառակը, մարդկային թոյլ եւ շատ տկար կողմերից մէկն էլ այն է, որ լսածին հաւատալ են ուզում առանց ճշմարտութեան կշիռ ունենալու, այո՛, շատ հեշտ է դատելը՝ մանաւանդ ուրիշին, բայց դատուել ո՞վ է ցանկանում. մարդասպանը նոյնիսկ դատից խուսափում է, ո՛ր մնաց անմեղն ու անպարտը: Ես էլ, թէեւ ներսս բոլորովին մաքուր ու ջինջ է, ինչպէս պայծառ ու յստակ վտակ, բայց չար մարդիկ քար են ձգում ու պղտորում: Անշուշտ, կանցնէ պղտորումը, էլի վճիտ կը լինի, բայց եւ այնպէս պղտորելուց յետոյ: Գէթ մի այնպիսի չար բան արած լինէի, որ անպատուաբեր լինէր իմ կոչման, սիրտս չէր ցաւի, կասէի՝ «Հնձի՛ր ցանածդ», բայց չարի բերանը չոփ է լցրած:

Էլի մոռացել եմ բոլոր բաները, իմ ազնիւ, հաւատարիմ նուագարանս, որ հասարակ սնդուկ է, մետաղի թելով, նա՛ր անգամ ինձ հասկանում է եւ ես իմ սիրտը բաց եմ անում նորա առաջ, նա ինձ կարեկցում է, որպէս ինքս կցանկայի,

նա ինձ հասկանում է, որպէս ես ինքս ինձ, նա ինձ մխիթարում է իմ սրտից
բղխած հեծկլտանքների արձագանքն ինձ անդրադարձնելով, եւ ես էլի
մխիթարում եմ ինձ եւ ասում, որ կայ բնութեան մէջ մի ազնիւ բան՝ գեղարուեստ,
որին ամենքը մատչելի չեն, եւ հէնց այնտեղ եմ գտնում իմ անդորրութիւնը եւ
հանգստութիւնը եւ զգում եմ, որ մի վայրկեան հեռու եմ սլացել աշխարհի
անօրէնութիւններից: Յաւն անցաւ, սպին մնաց: Աստուած իրանց բարին տայ:
Վաղը կը գամ եւ տետրակներն էլ հետս կը բերեմ:

Շատ ու շատ բարեւ բոլորիդ
Ձեր անձնուէր Կոմիտաս

Կար ու չը կար,
Մի մոծակ կար:
Բզզաց,
Դզզաց
Եկաւ,
Նըստաւ
Ճակտիս վերան,
Բացաւ բերան,
Հանեց իր փուշ,
Ու եկաւ կուշ,
Ձայնը կըտրեց,
Ինձի խաբեց
Կըծեց, ծակեց,
Թոյնը թափեց,
Նըշան դրաւ
Ելաւ, թըռաւ:
«Մոծա՛կ անկոշ,
Երկարապոշ,
Դու քուն չունի՞ս,
Դու քուն չունի՞ս,
Իմ ճակատիս
Դու ի՞նչ ունիս»:
– «Այդ պարտքըս է,

Բայց ինձ լըսէ:

Սագով,

Նագով,

Ձայն եմ տալիս,

Այնպէս գալիս:

Զգուշացիր դու

Դու մըլակից,

Որ կըծում է

Կաշու տակից»:

1906. դեկտեմբերի 8. Փարիզ.

3. Գ. Ներսըս կը կարդար ներսի թղթերի մէջ, իսկ դուրսըս՝ դրսի:

Բոլորին նուից բալէի եմ գլում, սատ ապլիք, ուլախ լինիք, չալը չոլում չոլանայ,
իսկ սատանան կոլանայ: Ամէ՛ն:

Կոմիտաս Վարդապետ